

ԳԻՒԱՆ ՍՈՒՐԲ ԱԹՈՌՈՅ**ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ****Տ. ՍԵՐՈՎԲԷ ԱՔԵՂԱՅ ԱՆՏՈՆԵԱՆԻ**

Աւագանի անունով Գէորգ, ծնած է 21 Մայիս, 1985-ին, Վրաստանի Թբիլիսի քաղաքին մէջ: Զաւակն է Ալպերթ եւ Յասմիկ Անտոնեաններու:

1992-2003 թթ. միջնակարգ կրթութիւնը ստացած է Թբիլիսիի թիւ 95 հանրային դպրոցին մէջ:

2003-2007 թթ. ուսանած եւ աւարտած է Թբիլիսիի՝ Իլիա Ճաւճաւաձէի անուան Օտար լեզուներու համալսարանի Վրաց եւ Հայոց լեզուներու բանասիրութեան ֆակուլտետը:

2007-2008 թթ. ապա 2010-2012 թթ. եղած է Թբիլիսիի Ս. Գէորգ առաջնորդանիստ եկեղեցւոյ Լուսարար, եւ համատեղութեամբ ուսուցչութիւն ըրած է թեմի Կիրականօրեայ դպրոցին մէջ՝ դասաւանդելով Հայ եկեղեցւոյ պատմութիւն:

2008-2010 թթ. ուսանած է Երուսաղէմի Ժառանգաւորաց վարժարանէն ներս, սակայն ուսումը կիսատ ձգելով վերադարձած է Թբիլիսի:

2012-2013 թթ. եղած է Թբիլիսիի Ս. Էջմիածին եկեղեցւոյ Լուսարար եւ «Հայարտուն» կեդրոնի Սուրբ Գրքի եւ հայագիտութեան մասնագէտ:

2013-2018 թթ. եղած է Վիրահայոց թեմի «Հայարտուն» կրթամշակութային եւ երիտասարդական կեդրոնի հագեւոր տեսուչ:

2014-2016 թթ. եղած է Վիրահայոց թեմի առաջնորդի գաւազանակիր եւ օգնական:

2015-ի Փետրուար 1-ին համատեղութեամբ նշանակուած է Վիրահայոց թեմի առաջնորդարանի սոցիալական հարցերու ղեկավար:

2016-ին՝ Վիրահայոց թեմի օրուան առաջնորդ՝ Տ. Վազգէն Եպս. Միրզախանեանի ձեռամբ ձեռնադրուած է սարկաւագ եւ նշանակուած է Թբիլիսիի Ս. Գէորգ առաջնորդանիստ եկեղեցւոյ հոգեւոր հովուի օգնական:

2018-2020 թթ ուսանած եւ աւարտած է Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան Ընծայարանը, ապա ծառայութեան կոչուած է Սուրբ Թէոդորոս Զեռագրատան մէջ:

2021-2024 թթ. ծառայած է Սուրբ Աստուածածնի Վերափոխման տաճարին մէջ իբրեւ ծառայող միաբան:

2024-ի Օգոստոս 11-ին, ձեռամբ Լուսարարարպետ՝ Տ. Սեւան Արք. Ղարիպեանի ձեռնադրուած է կուսակրօն քահանայ՝ վերակոչուելով Տ. Սերովբէ Աբեղայ: